




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13.684

Հ. Ս. Խ. Հ.

ԿԵՆՏՐԱԼԻԶԱՐ

Խ. Ս. Հ. Ս.

Ս. Ս.

ԿԵՆՏՐԱԼԻԶԱՐ

09 DEC 2000

1926 թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Ձև № 7

ՀՐԱՀԱՆԳ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼ ՀԱՄԱՄԻՈՒ-
ԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆ-
ՎԱԾ ԶԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՈՐՎԱՆ, ԱՅՍԻՆԲՆ՝
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԱՅԼ ՎՈՉ ԹԵ ԱՅՆ ՈՐՎԱՆ
ՅԵՐԲ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՂԸ ԼՐԱՑՆՈՒՄ Ե ԹԵՐԹԻԿԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ամեն մի բնակչի համար, բացառությամբ չանելով նայել ծծիկեր յերեխաներին, կաղմվում ե առանձին անձնական թերթիկ:

2. Անձնական թերթիկներն անպայման լրացնում են ցուցակադրողները հարցման յենթարկվողների առանձինների համաձայն:

3. Մարզահամարի ժամանակ չպահանջել վոչ մի փաստաթուղթ: Յուրաքանչյուրը կարող ե հանդիստ սրտով ճիշտ պատասխաններ տալ անձնական թերթիկի հարցերին, վորովհետև այդ պատասխանները չեն ողտազործվելու վորևե վարչական նպատակների կամ հարկեր ու տուրքեր դանձելու համար:

4. Անձնական թերթիկի բոլոր հարցերին հարկավոր և պատասխանել բառերով առանց կրճատումների, իսկ վորտեղ անհրաժեշտ է թվերով, գրել այդ թվերը հարցերի դիմաց: Թերթիկի մեջ վորտե ասպագրված բառերի տակ վորպես պատասխան ընդգծել չի թույլատրվում:

Բացասական պատասխանի ժամանակ վոչ թե գիծ քաշել հարցի դիմաց, այլ բառերով գրել բացասական պատասխանը: Պատասխանները գրել պարզ և ըմբռնական մատիտով, կամ թանաքով:

5. Պատասխանները գրելուց առաջ, ցուցակագրողը պետք է ուշադիր կերպով ուսումնասիրած լինի թե անձնական թերթիկը և թե այս հրահանգը:

6. Չմոռանաք յուրաքանչյուր թերթիկում գրել հարցման յենթարկվողի այն տեղի հասցեն (բնակավայրը, փողոցը, տունը և այլն), վորտեղ նա ներկա չէր մարդահամարի որը:

7. Անձնական քերթիկները կազմվում են միայն հերկա գտնվող ազգաբնակչության համար, այսինքն նրանց համար, ովքեր մարդահամարի որը ներկա չեն յեղել տվյալ բնակավայրում (քաղաքում, գյուղում և այլն):

Ա) Ուստի անձնական քերթիկներ յուրաքանչյուր բնակարանում գրվում են միայն նրանց համար:—

ա) Ովքեր մարդահամարի որվա նախընթաց գիշերը, այսինքն լույս 17-ի գեկտեմբերի գիշերը, գիշերել են տվյալ կացարանում (թեկուզ նրանք այդ կացարանում մշտապես ապրելիս ել չլինեն) իսկ նրանք ովքեր ապրում են այդ միևնույն բնակավայրում (քաղաքում, գյուղում

և այլն), բայց ուրիշ կացարանում, նրանք ցուցակագրվում են իրենց բնակարանում:

բ) Ովքեր թեև չեն ել գիշերել տվյալ բնակարանում, բայց այդ ժամանակ յեղել են այդ միևնույն բնակավայրում (գիշերային հերթի աշխատավորները, գիշերային կառապանները, պահակատեղերում կամ հիմնարկություններում գիշերը հերթապահ յեղողները, հյուր յեղողները):

գ) Վորոնք ծնվել են մինչև մարդահամարի որվա կես գիշերը, այսինքն լույս 17-ի գեկտեմբերի գիշերվա մինչև ժամի 12-ը:

դ) Մարդահամարի որվա կես գիշերից հետո մեկածները: Այսինքն լույս 17-ի գեկտեմբերի գիշերվա ժամ 12-ից հետո:

Ծանոթություն.— Մասնավոր բնակարաններում ապրող զինվորական ծառայողները ցուցակագրվում են այդ բնակարաններում, թեկուզ նրանք ցուցակագրված ել լինեն ծառայության տեղում:

Բ) Անձնական քերթիկների վրա տվյալ բնակարանում չեն գրվում հետևյալները՝

ա) Տվյալ բնակարանում այդ որը գիշերողները, վորտե չարունակ ապրում են միևնույն բնակավայրում, բայց՝ ուրիշ բնակարանում:

բ) Նրանք, ովքեր այդ որը հերթապահ են հիմնարկություններում, ցուցակագրվում են վոչ թե իրենց հերթապահության տեղում, այլ այն բնակարանում ուր նրանք չարունակ ապրում են:

ՀՀ Ազգային գրադարան



NL0189243

6553-53



դ) Մարդահամարի որից առաջ կալանավորութեան տեղեր կամ հիվանդանոցներ ուղարկվածները (ներանք անպայման ցուցակագրվում են հիվանդանոցներում կամ կալանավորութեան վայրերում) :

դ) Մարդահամարի որվա նախընթաց կես զեշերից հետո ծնվածները :

ե) Մարդահամարի որվա նախընթաց զեշերվա ժամի 12-ից հետո տվյալ բնակարանը տեղափոխվողները :

Հիշեցեմ, վար ուրիշ քաղաքում կամ ուրիշ գյուղում ապրողները, յեթե մարդահամարի որը գիշերել եյին ձեզ մոտ, գրվում են ձեր բնակարանի բերքիկներում :

2. ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՁՆԱ- ԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՍՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

(Բացի գրադմունքին վերաբերվող հարցերից)

Գուցակագրողը հրահանգչի ցուցմունքով լրացնում է «վիճակագրական չրջան», «հրահանգչի չրջան» և «ցուցակագրողի չրջան» հարցերը :

Անձնական թերթիկները ցուցակագրողի կողմից համարակալվում է ըստ կարգի՝ ցուցակագրողի շրջանի սահմաններում :

Թերթիկը հարցի առթիվ.—«Արական» կամ «Իգական» գրել լրիվ, առանց կրճատումների :

Թերթիկը հարցի առթիվ.—Մի ամսականից փոքր յերեխաների համար տարիքը նշանակել 0 (զերո) ամսական :

Զորքորդ հարցի առթիվ.—Այստեղ գրվում է, թե հարցման յենթարկվողն իրեն ինչ ազգից է հաշվում : Այն դեպքում, յերբ հարցման յենթարկվողը դժվարանում է այդ հարցին պատասխանել, գերադասութիւն է տրվում մոր ազգութեանը և ցեղին :

Վորովհետև մարդահամարը նպատակ ունի վորոշել ազգաբնակչութեան ցեղային (ետնոգրաֆիկական) կազմը, ուստի 4-րդ հարցի համար տրված պատասխաններում ցեղն ու ազգութիւնը չպետք է փոխարինել կրօնով, (որինակ չի կարելի գրել իսլամ, մալական կամ այլն), հպատակութեամբ, քաղաքացիութեամբ կամ մի վորեւ հանրապետութեան տերիտորիայի վրա ապրելու նշանով : 4-րդ հարցի մասին տրված պատասխանը կարող է և համապատասխանել 5-րդ հարցի՝ մայրենի լեզվի, վերաբերմամբ տրված պատասխանին :

Պետք է նկատի ունենալ, վոր միևնույն ընտանիքում կարող են և տարբեր ազգութեան պատկանող անդամներ լինել :

Հիմնգերքորդ հարցի առթիվ.—Մայրենի լեզու յե համարվում այն լեզուն, վորին հարցման յենթարկվողն ամենից ավելի յե տիրապետում, կամ վորով նա սովորաբար խոսում է :

Վեցերորդ հարցի առթիվ.—Նրանք, ովքեր մարդահամարը սկսվելու միջոցին յեղել են այն բնակավայրում, ուր նրանք ծնվել են, հարցի առաջին մասում գրել «այստեղ» ուրիշ տեղերում ծնվածները՝ «վոչ» : Հարցի յերկրորդ մասին պատասխանելիս նկատի ունենալ Միութեան ներկա վարչական բաժանումը : Այն դեպքում, յեթե ցուցակագրողը անկարող է ցույց տալ

նոր բաժանումը, ցույց են տրվում նահանգները, դա-
վառները և վոլոստները կամ քաղաքները հին բաժան-
մամբ, նշելով «հին»: Նրանք, վորոնք չեն ծնվել այն
վայրում, վորտեղ մարդահամարի յե յենթարկվում,
բայց ծնվել են նույն հանրապետության (Ադրբեջան,
Հայաստան և Վրաստան) մի այլ տեղում պատասխա-
նում են «վորտեղ և ծնվել» բոլոր հարցերին, տվյալ
հանրապետության մեջ չծնվածները, չեն նշանակում,
դավառամաս, թեմի դոյրա, վորտեղ նրանք ծնվել են:

Յեթե մեկը ծնվել է Ս. Միության ներկա սահման-
ներից դուրս, պետք է ցույց տալ այն պետությունը
և այն շրջանը, վորտեղ ծնվել է. որինակ՝
Վանի դյուղերում ծնվածները գրում են «թյուր-
քիա—Վան», Բասենում ծնվածները «թյուրքիա
—Կարին» Ատաբաղարցիները, բրուսացիները և այլն
«թյուրքիա—Անատոլու»: Սալմաստի գյուղերում ծըն-
վածները—«Պարսկաստան—Սալմաստ», իզդիրցիները
թյուրքիա—Սուրմալու», սարիղամիչցիները «թյուր-
քիա—Կարս» և այլն:

Յերբ է յեկել խորհրդային Միություն պետք է
ցույց տալ այն թվականը, յերբ իր յերկրից վերջնա-
կանորեն քանդվելով յեկել է, թեկուզ դրանից հետո մի
քանի անգամ այցելած լինի իր հայրենիքը, կամ թե ու-
րիշ յերկրներ գնացած ու վերադարձած լինի: Որինակ,
մի վանեցի առաջին անգամ վախել և յեկել է 1915 թ.,
հետո 1916 թ. կրկին գնացել է Վան և կրկին վերադար-
ձել է 1917 թ., վերստին գնացել է Վան և 1918 թ. վերա-
դարձել է, 1919 թ. գնացել է Ամերիկա և 1922 թ. վե-
րադարձել է, 1923 թ. գնացել է Պարսկաստան և 1925 թ.

վերադարձել է: Այդպիսիների դիմաց նշանակել
1915 թ.:

Վորովհետև ժողովուրդը դժվարանում է վորոշել
մեծ դաղթերի թվականները, ուստի նկատի ունեցեք
վոր մեծ դաղթերը հետևյալներն են՝

1914 թ. Բասենի, Այաշկերտի, Բայազեդի և Սարալի
(Վան) շրջանները:

1915 թ. Վան, Բիթլիս, Մուշ, Կարնո մնացյալ շրջ-
անները, Տրապիզոն և Տաճկաստանի մնացյալ մասերը:

1916 և 1917 թ. Գերսիմի գծով և Վանի շրջանում
քրդերից աղատվածները:

1918 թ. Տաճկաստանի վերջին դաղթը, Սալմաստ,
Խոյ, և Ատրպատական (Պարսկաստանից), Սուրմալու և
Կարսի 1-ին անգամ:

1920 թ. Սուրմալու և Կարս վերջին անգամ:

1923 թ. Սև ծովի շրջանի հայերը, Բաղդադից և
Պոլսից (առաջին անգամ) յեկածները:

1925 թ. Պոլսո շրջակայքի, Հունաստանի և Անա-
տոլի հայերը:

Յորեքորդ հարցի առթիվ.— Տվյալ բնակա-
վայրում մնալու տեղությունը վորոշելիս ուշադրու-
թյան չեն առնվում այն ընդմիջումներով բացակայելը,
վորոնց տեղությունը յուրաքանչյուր անգամ յեղել է
մի տարուց պակաս, իսկ յեթե մեկը այդ բնակավայրե-
րից բացակա յե յեղել մի տարուց ավելի, այդպիսիների
այդ բնակավայրում մնալու տեղությունը հաշվվում է
այդ ընդմիջումից վերադառնալուց հետո:

Առթերորդ հարցի առթիվ.— Այդ հարցին պատաս-
խանելիս չարձանագրված ամուսնությունը հավասա-

րեցնվում է արձանագրվածին: Սակայն ամուսնալուծվածներ են համարվում նրանք միայն, ովքեր ամուսնալուծութան մասին պատշաճ վավերագրեր ստացել են:

Իններորդ հարցի առթիվ.— Հարցի առաջին մասում, «ինչ լեզուներով եք կարդում և գրում» նշանակվում են բոլոր լեզուները, վորոնցով հարցման յենթարկվողը հասկանալով կարդում և գրում է, ըստ վորում առաջին հերթին նշանակել մայենի լեզուն (տես վերելի հարց № 5): Կարդալ իմացողներ են համարվում այնպիսիները, վորոնք կարդում են տպագրել խոսքերը թեկուզ վանկ-վանկ: Գրել իմացողներ համարվում են այնպիսիները, վորոնք կարողանում են վերլուծել բովանդակությունը: Հարցի յերկրորդ մասում, «թե միայն կարդում ե», գրվում են նույն կարգով այն լեզուները, վորով հարցման յենթարկվողը միայն կարդում է (հասկանալով բովանդակությունը):

Յեթե պարզվի, վոր հարցման յենթարկվողը գիտե կարդալ, բայց չի կարող գրել, բացառությամբ յուր ազգանունը այս կամ այն լեզվով գրելուց, պետք է այդ մասին անպայման հարց տալ ու այդպիսի լեզվի տակ ընդգծել: Հարցի յերրորդ մասում, «թե բոլորովին անգրագետ ե», նշանակել անգրագետ, յեթե բոլորովին չգիտե վոչ գրել և վոչ կարդալ:

Տասերորդ հարցի առթիվ.— Ֆիզիկական պակասություններին և ծանր վնասվածքներին նշանակել միայն՝

Յերկու աչքով կույրությունը, իսկ ու համրությունը, մի ձեռանին, յերկու ձեռքից գրկված լինելը, մի վոտանին, յերկու վոտքից գրկված լինելը, վերջավորությունների կաթվածահարությունը.— (վորը

գրկում է շարժվելու հնարավորությունից): Ձեռք չունեցողներ են համարվում նրանք, ովքեր չունեն թեկուզ ձեռքի թաթը, իսկ անվոտանի՝ յերբ չունեն ներքանը: Հարցի յերկրորդ մասում (պատճառը) անպայման նշանակել՝ արդյոք 1. ի ծնե չեն այդ պակասությունները (նշանակել «ի ծնե» . չե՞ն ստացել 2. պատերազմում (նշանակել «պատերազմի հաշմանդամ») կամ 3. ֆարքիկաներում, գործարաններում, յերկաթուղիներում աշխատելիս և առհասարակ վարձու աշխատանք կատարելու միջոցին (նշանակել «աշխատանքի հաշմանդամ») ու 4. յուր տնտեսության մեջ աշխատելիս (գրվում է «իւր տնտեսության մեջ աշխատելիս»):

Տասնմեկերորդ հարցի առթիվ.— Այստեղ պետք է նշանակել ակնհայտ հոգեկան հիվանդները, կամ ի ծնե տկարամիտները (հիմարները, ապուշները և այն), թե հիվանդանոցներում բուժվողները և թե խնամակալություն տակ գտնվողները, կամ ազգականների մոտ ապրողները: Ի ծնե տկարամիտների համար նշանակել «հիմար» իսկ հետագայում հոգեկան հիվանդություն ստացածների մասին «հոգեկան հիվանդ» (խելագար): Վերջիններին մասին նշանակել, թե չեն հիվանդացել նրանք, արդյոք պատերազմում (նշանակել պատերազմ):

3. ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՅԵՎ ԶԲԱՂՄՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ (12—15 ՀԱՐՑԵՐ)

Տասներկուերորդ հարցի առթիվ.— 12-13 հարցերում նշվում են այն գրազմունքները միայն, վորոնք

վառտակ կամ յեկամուտ են բերում: Ուստի սեփական տնային տնտեսութեան զբաղմունքները մարդահամարի ժամանակ չեն գրվում և նրանցով զբաղվողները պատասխանում են միայն 15-րդ հարցին. այն է՝ ում հաշվին են ապրում (ապրուստի միջոցների մասին):

Դիտարկելով զբաղմունքը համարվում է այն, վորք ապրուստի գլխավոր աղբյուրն է կազմում:

Զբաղմունքի մասին հարց տալու ժամանակ անպատճառ պետք է հարց տալ վոչ միայն գլխավոր, այլ և կողմնակի զբաղմունքների մասին և վերջինս նշանակել «կողմնակի աշխատանքներ» հոդվածում:

Գյուղական վայրերում, վորտեղ գյուղական աղագրական կուլթյունը, գյուղատնտեսութեան մեջ բացի իր հիմնական զբաղմունքից, մանավանդ գյուղատնտեսական աշխատանքները վերջացնելուց հետո, վորպես կողմնակի աշխատանք զբաղվում է տնայնագործութեամբ (գորգագործութիւն, շալագործութիւն, թուղթագործութիւն, կավագործութիւն, պղնձագործութիւն, կողովագործութիւն և այլն), բեռնակրութեամբ և այլն, այսպիսի կողմնակի աշխատանքները պետք է հատկապես պարզվեն և նշանակվեն խնամքով և մանրամասնորեն:

Այդ նպատակով հրահանգիչը նախորդ պարզում և իր հրահանգչական շրջանում գտնվող տնայնագործութեան այս կամ այն ճյուղերը, ըստ հնարավորութեան գյուղատնտ. գյուղ (իր շրջանի) և տալիս է համապատասխան ցուցմունքներ իր ցուցակագրողներին: Կողմնակի զբաղմունքներից նշանակվում են այն զբաղմունքները, վորոնք տալիս են վաստակ: Այն դեպքում յերբ

հարցման յենթաբնիկոյն ունի յերկու կամ ավելի կողմնակի զբաղմունքներ, նշանակվում է նրանցից միայն մեկը, վորը համեմատաբար մյուս կողմնակի աշխատանքների հետ ավելի շատ վաստակ է տալիս:

Լիտեր « a ».—12-րդ հարցի « a » կետին պետք է պատասխանել վորքան կարելի յե մանրամասնորեն, առանց այնպիսի անորոշ նկատողութիւնների, ինչպես «մետաղագործ», «չինարարական բանվոր» և այլն, այլ պետք է անպայման պարզ ցույց տալ վոչ միայն զբաղմունքի անունը այլ և մասնագիտութիւնը, որինակ. «փականագործ» ինսարումե-տալչիկ», «կոշիկներ ձեռք» և այլն: Գյուղատնտեսութեան մեջ մասնագիտութիւն ասելով պետք է հասկանալ՝ գյուղատնտեսական արտադրութեան և գյուղատնտեսական զբաղմունքների տեսակները՝ որինակ՝ հողագործ, ծխախոտագործ, բանջարաբույծ, հովիվ և այլն:

Այն սեագործ բանվորները, վորոնք շարունակ կատարում են մի վորեւե վորոշ աշխատանք, պետք է նշանակեն նրանց աշխատանքի տեսակը, այլ վոչ թե պրեն՝ «սեագործ բանվոր»:

Սեագործ բանվորներ համարել նրանց, վորոնք վարձված են տեական ծառայութեան կամ աշխատանքի համար և չունեն վորոշ մասնագիտութիւն այլ վարձողի մոտ կատարում են զանազան բնույթ կրող աշխատանքներ:

Նրանք, վորոնք ժամկետային վարձու աշխատանքներ են տանում ձեռնարկութեան մեջ, գործատիրոջ կամ վորեւե մեկի մոտ և աշխատավարձ են ստանում

որովարձի հաշվով չպետք է նշանակել նրանց զբաղմունքը վորպես որավարձ բանվորներ, այլ գրել «ձ» կետում, թե իսկապես ինչ աշխատանք են կատարում (բեռնակիրներ, ավուղներ, սեազորժ բանվորներ և այլն)։ Միայն նրանք վորում վորոշ մասնագիտություն, և աշխատանքի տեղ չունեն և մի ուր աշխատում են մի ձեռնարկություն մեջ, իսկ մյուս որը մի ուրիշում, գրվում են 12-րդ հարցում «փոփոխական որավարձ աշխատանք»։

Այն աշակերտները, վորոնք արտադրության, առևտրի ու հիմնարկությունների մեջ վորևե վաստակ ունեն, չեն գրվում միայն «աշակերտ» այլ ցույց են տալիս նաև այն զբաղմունքը, վորը սովորում են, որին նակ՝ «փականագործ աշակերտ» «գործավար աշակերտ» և այլն։

Լիտեր «B».—Կոմունաների ու բնկերությունների անգամները համարվում են արտելների անգամներ։ Միայնակներ են համարվում, ինչպես իր իսկ տանն առանց բանվորների և առանց վորևե մեկի ոգնություն աշխատողները, այնպես էլ տները գնացող ու պատվերով վորևե աշխատանք կատարող միայնակները, առանց վորոշ ժամանակամիջոցով վարձվելու (որինակ, որավարձով լվացք անողները, փայտ ճղողները, ապակի գցողները, ամանեղեն նորոգողները և այլն), նմանապես միայնակ առևտուր անողները և ազատ պրոֆեսիա ունեցողները։

Զբաղմունքում բնտանիքին ոգնող անդամներ են համարվում նրանք, ովքեր շարունակ ոգնում են իրենց բնտանիքի գլխավորին—իրանց աշխատանքով նրա ար-

հետում ու զբաղմունքում։ Գյուղատնտեսության մեջ անկախ իրենց հասակից բնտանիքին ոգնող անդամներ են համարվում նրանք, ովքեր մասնակցում են գյուղատնտեսական հիմնական աշխատանքներին (դաշտային աշխատանքներին, կալսելուն, անասուններ արածացնելուն և այլն), քեկուգ միաժամանակ աշխատելիս էլ իննեն տնային տնտեսության մեջ։

Աղբաբնակչությունն ըստ արտադրական ճյուղերի էլ ավելի ճշտորեն բաժանելու նպատակով 12-րդ հարցի «ձ» կետում լրիվ կերպով նշանակվում է. 1. Հիմնարկություն, կամ ձեռնարկության կամ ֆիրմայի անունը. 2. արտադրության տեսակը։ Ըստ վորում այստեղ չբնկետք է բավականանալ միայն ձեռնարկության անունը տալով (Արարատ, Նայիրի, Լուկաչին և այլն), այլ պետք է հիշել ձեռնարկության տիպը, այսինքն, թե ինչպիսի ապրանքներ է արտադրում գործարանը, ով ինչ առևտուր է անում, ինչով է զբաղվում հիմնակությունը և այլն և այլն։ 3. Նրա մանրամասն հասցեն. որինակ՝ Գինու-Կոնյակի գործարան «Արարատ», Շահումյան փողոց № 31, Կինո «Նայիրի» Ամիրյան փող. № 24, գյուղատնտեսի պահածոյի գործարան Լենինի փողոց № 9, Միասնիկյանի անվան 2-րդ աստիճանի դպրոց Ամիրյան փողոց № 26։

Ինչպես իրանց գյուղական տնտեսությամբ զբաղվող գյուղացիները, այնպես էլ ազատ պրոֆեսիա ունեցողները, այդ կետին չեն պատասխանում։

Տասներեքերորդ հարցի առթիվ.—Գործազուրկներ են համարվում միայն նրանք, ովքեր ներկայումս բոլորովին գործ չունեն ու գործ են փնտրում։ Մի վորևե

վաստակ ունեցողը (թեկուզ ժամանակավոր և այն ել մի քրաղմունքի) համարվում և զրաղմունք ունեցող պատասխանում և 12-րդ հարցին, այլ վոչ թե 13-րդի նմանապես այն գործադրիչները, վորոնք զրաղված հասարակական աշխատանքներով 12-րդ հարցի « 8 » կետում գրում են աշխատանքի տեսակը, իսկ այդ միջև 12-րդ հարցի « Ը » կետում գրում են՝ «Հասարակական աշխատանքներ» այս ինչ տեղում (իր աշխատելու տեղը) :

Գյուղական վայրերում յեթե գյուղատնտեսութամբ զրաղված անձերը մարդահամարի ժամանակ իրենց ցույց են տալիս վորպես անգործներ, նկատի ունենալով գյուղատնտեսական աշխատանքների սեզոնային բնույթը, չպետք և հաշվել անգործ, այլ ցույց տա 12-րդ հարցում այն զրաղմունքը, վորով նրանք զրաղված ելին գյուղատնտեսական աշխատանքների չըջանում որինակ՝ հողագործ, բանջարաբույծ և այլն :

Գործադրիչության տեղությունը հաշվվում և աշխատանքի ժամանակամիջոցը, վորի բնթացքում հարցման յեթարկվողը վոչ մի վաստակ չի ունեցել : Նախկին զրաղմունքի վերաբերյալ հարցին պետք և պատասխանել ցույց տալով այն վերջին զրաղմունքը, վորին հաջորդել կատարյալ գործադրիչություն : Նրանք, ովքեր առաջին անգամն են վարձու աշխատանք վորոնում և առաջ և զրաղմունք չեն ունեցել (անխնայագործ են յեղել) պատասխանում են 13-րդ հարցի « Բ » կետին « առաջին անգամն եմ աշխատանք վորոնում » :

Տասնչորսերորդ հարցի առթիվ. — Այն անձինք, վորոնք զրաղմունք չունեն, հետևապես չունեն և սեփա-

ն աշխատավարձ, բայց ապրում են իրենց հաշվին, տեղ ցույց են տալիս թե հատկապես ինչ միջոցներ են ապրում : Որինակ՝ կենսաթոշակ, թոշակ, ներստ Սոցալից, տնից հասույթ ստացողներ և այլն... անազան հիմնարկություններում պահվողները (պեթյան կամ հասարակության խնամակալություն տակ դրողները, ինչպես որինակ մանկատներում ու մանկատեղիներում, անկեյանոց կամ խրոնիկ հիվանդներին տեղ, դպրոցական հանրակացարաններում, կալանատեղիներում պատիժ կրողները, հոգեկան հիվանդների բուժարաններում բժշկվողները և այլն), զրաղմունքի վերաբերյալ հարցերին չեն պատասխանում, իսկ 14-րդ հարցում ցույց են տալիս այն հիմնարկության անունը, տեղը նրանք պահվում են և թե վոր կատեգորիային նրանք պատկանում (հաշմանդամ, հիվանդ, բանտարկյալ և այլն) :

Նրանք, վորոնց ապրուստի զլխավոր աղբյուրը համարվում և դատական վորոշմամբ հատկացրած սնունդը, նախ նշանակվում են այդ կետում :


Տասնհինգերորդ հարցի առթիվ. — Ծնողների (և հանրապես մասնավոր անձանց) միջոցներով ապրող սեփական վաստակ չունեցող անձինք այստեղ նշանակվում են իրենց հարաբերությունը գեպի իրանց կերպողները («ամուսնու միջոցներով», «մոր միջոցով» և այլն) ապա կերակրողի զրաղմունքը և նրա գրությունը զրաղմունքում, անպատճառ ցույց տալով նույն արտաբերության տեսակը :

Կերակրողի զրաղմունքի ու սոցիալական դրությունը որոշելով պատասխանը նույն բովանդակությունը

պիտի ունենա, ինչ վոր կերակրողի անձնական թեր-
թիկում այդ հարցերին տրված պատասխանում, ուստի
իրանց ծնողների մոտ ապրող անինքնադործների անձ-
նական թերթիկները, ուշադրությամբ համեմատելով
ստուգվում են ծնողների թերթիկների հետ:

Սեփական վաստակ ունեցողները, վորոնք միաժա-
մանակ ապրում են նաև ծնողների միջոցներով, հա-
մարվում են ինքնադործներ (զբաղմունք կամ սեփական
միջոցներ ունեցողները) և պատասխանում են 12-րդ
կամ 14-րդ հարցերին, բայց վոչ 15-րդ հարցին: Այն
զործագուրկները, վորոնք ժամանակավորապես ա-
պրում են ծնողների միջոցներով, պատասխանում են
13-րդ հարցին և չեն պատասխանում 15-րդ հարցին:

Դպրոցական հաստատություններում սովորելը
մարդահամարի ժամանակ զբաղմունք չի համարվում:
Սովորողները պատասխանում են 12-րդ հարցին, յեթե
իրենց սեփական վաստակն ունեն. թոչակառուները
ցույց են տրվում 14-րդ հարցում, ծնողների միջոց-
ներով ապրողները 15-րդ հարցում:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԵՆՏՎԻՃՎԱՐԻ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրանիս. 2262գ.

Պատվ. 666

Տիրաժ 3000